ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՍՈՑԻԱԼ_ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԽՈՒՄԲ՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԳՐՈՂԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

ԿԱՏԱՐՈՂ՝ ՆԱՐԻՆԵ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

2022Թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2.ԳԼՈՒԽ 1.ՈՒՍՈՒՄՆԱԾԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԷՔՍԿՈՒՐՍԻԱ

3.ԳԼՈՒԽ 2.ԳՐՈՂԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՈԹԱՏԵՏՐԸ՝

ՆԱՄԱԿԱՆԻՆ

4.ԱՄՓՈՓՈՒՄ

5.ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Համաքայլ ընթացեք կյանքի հետ, գիտակցե՛ք, որ ազգ մը այնքան արժե, որքան իր դպրոցը, իսկ այդ դպրոցի խնդիրն է աշակերտը մարդ ընել»:

Հովհաննես Հինդլյան

Ցանկացած բնույթի ուսումնական գործընթացի հիմնական նպատակներից մեկը սովորողների մեջ այնպիսի հոգեվիճակների ստեղծումն է, որոնք կապահովեն նոր և կայուն որակների ձևավորումը և դրանց կիրառումը տարբեր ոլորտներում: Ժամանակի հրամայականով՝ ուսուցումը, ուսումնառությունն այնպիսին է լինելու, որ երեխաները դպրոցն ավարտեն ոչ միայն անհրաժեշտ գիտելիքով զինված, այլև բարոյապես, ֆիզիկապես և գեղագիտորեն հասունացած, իսկ դրա համար պետք է դպրոցը մոտեցնել կյանքին: Ուսուցման մեթոդների արդյունավետության հիմքը սովորողին ուսումնական գործունեությանը ակտիվ ներգրավելն է, երբ վերջինս հնարավորություն է ստանում իր տեսակետը արտահայտելու և պաշտպանելու, բանավիճելու կամ համալրելու նոր դատողություններով: Այսօր տեղեկույթի ընկալումը ակտիվ գործընթաց է, և երբ այն համակցում է արտաքին միջավայրից ստացվող հուզական տպավորություններ ու պատկերային ընկալումներ, սովորողը առավել ակտիվ հետաքրքրություն է ցուցաբերում՝ անձնապես մասնակցելու և լրացնելու ունեցած գիտելիքները խմբային գործունեության շնորհիվ: Այս առումով, օրինակ, գրողի կենսագրության ուսուցումը նրա տուն-թանգարանում առավելագույն ձևով նպաստում է դասի աշակերտական նպատակի իրականացմանը: Հանրակրթության պետական չափորոշիչներում հայոց լեզվի և գրականության բնագավառին առաջադրում են նոր խնդիրներ, դրանց լուծման համար նոր մոտեցումների մշակման անհրաժեշտություն: Առավել կարևորվում են հատկապես ուսուցման բովանդակային կողմին առաջադրվող պահանջները, որոնց իրականացումը կապահովի ուսումնական տարբեր բնագավառների միասնությունը, հիմնավոր գիտելիքների ձեռքբերումը, սովորողների հմտությունների, կարողունակությունների զարգացումը, արժեքային համակարգի, դիրքորոշման ձևավորումը և ստեղծագործական ունակությունների բացահայտումը: Ավագ դպրոցում հայ գրականության

ուսուցումը մի կողմից՝ մեծապես նպաստում է լեզվական գիտելիքների յուրացմանն ու գործնական կիրառմանը, մյուս կողմից՝ դառնում է անհատի համակողմանի դաստիարակության անփոխարինելի գործոն: Հայ գրականության դասավանդման հայեցակետային նպատակներից է անհատի հոգևոր և մտավոր զարգացումը, որի իրականացման համար անհրաժեշտ է սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, ազգային ու համամարդկային իդեալներին ու ձգտումներին: Այս ամենը կարելի է կատարել ոչ միայն սովորողներին զուտ գրական երևույթներին ծանոթացնելով, այլև գրական հերոսների, ինչու չէ, նաև մեր մեծերի, հեղինակների օրինակով՝ մարդասիրության ոգի, բարոյական բարձր հատկություններ՝ ազգասիրություն, հայրենասիրություն, պատվախնդրություն, բարություն, լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոյակամային հատկանիշներ դաստիարակելու միջոցով: Առանձնապես կարևորենք նաև, որ հայ գրականության ուսուցումը ավագ դպրոցում իրականացվում է որպես հայ գրականության պատմության ուսումնասիրման դասընթաց, որի հիմնական բովանդակությունը կարելի է համարել հայ գրականության զարգացման ընթացքի, գրողի և ժամանակաշրջանի փոխհարաբերությունների, գրական ուղղությունների և դպրոցների ուսումնասիրությունը:

Ըստ հանրակրթության պետական չափորոշչի՝ հանրակրթական դպրոցի 7-12-րդ դասարաններում գրականության ուսումնասիրությունը նպաստում է սովորողի՝ պատմական ժամանակաշրջանի, հեղինակների կենսագրության, տվյալ գրողի բերած նորության, հայ գրականության զարգացման վրա ունեցած ազդեցության, գրական սեռերի, ժանրերի, ժամանակաշրջանի հետ անմիջական կապի մասին պատկերացման ձևավորմանը: Գրական երկի ուսումնասիրությունը նպաստում է ստացած գիտելիքը սեփական խոսքով վերարտադրելու հմտությունների, վերլուծական և քննական կարողությունների, ինչպես նաև գրական ճաշակի ձևավորմանը, ազգային ինքնության ճանաչմանը և արժևորմանը:

Հետազոտական աշխատանքս այս առումով համարում եմ արդիական, որովհետև հայ գրականություն ուսումնական բնագավառի առաջ դրված հանրակրթական վերջնարդյունքներին հասնելու գործուն ճանապարհներից մեկը գրողի, ստեղծագործողի կյանքի, գործունեության ոչ երկրորդական,

նույնիսկ բացառիկ դերի ու նշանակության գիտակցումն է, որի ուսումնասիրման միջոցով ուսուցիչը կարող է հասնել ուսումնական նախատեսած վերջնարդյունքներին:

ԳԼՈՒԽ 1: Ուսումնաճանաչողական էքսկուրսիա

«Ուսուցման նպատակը միայն այն չէ, որ երեխային տա ծանոթություններ, գիտելիքներ, այլ այն է, որ դրանք դնի մի այնպիսի վիճակում, որ երեխան հարկին կարողանա գործադրել: Անհրաժեշտ է, որ ամեն մի գաղափար ծանոթություն լինի, ուժ»:

Գրողի ստեղծագործությունների ուսուցումն անհրաժեշտ է սկսել նրա կյանքի ուսումնասիրությամբ. սա կփաստեն բոլոր փորձառու մանկավարժները: Սակայն առաջին հայացքից սովորողների այսպիսի սկիզբը, որպես կանոն, դուր չի գալիս: Ուրեմն՝ ուսուցիչը գտնելու է դրդապատճառ(մոտիվացիա): Այս «Բարդ ու դժվարին» գործընթացը կազմակերպելու նպատակով հարկ է օգտվել այսօրվա ունեցած բոլոր հնարավորություններից՝ լայնորեն օգտագործելով տեղեկատվական բոլոր միջոցները՝ համացանց, ձեռնարկներ, փաստագրական նյութեր, դասագիրք և այլն: Հավելենք նաև, որ այսօր առավել հետաքրքիր են դառնում այն դասերը, որոնք ապահովում են սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը՝ գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական և ակտիվ մասնակցությամբ, երբ աշակերտի համար հնարավորություն է ստեղծվում դիտելու, լսելու, զգալու և ընկալելու: Իսկ երբ նյութի յուրացման ընթացքում աշակերտը հնարավորություն է ստանում ի մի բերելու, ամփոփելու, ամրապնդելու տեսածն ու լսածը, ստեղծվում է ինքնակրթության միջավայր, ձևավորվում է ինքնակատարելագործման ձգտում:

Այս ամենի իրականացման համար առաջարկում ենք, օրինակ,որպես ուսուցման կազմակերպման այլընտրանքային տարբերակ, Խ. Աբովյանի կենսագրության ուսուցումը կազմակերպել նրա տուն-թանգարանում: Այսպիսի դասը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու Աբովյանի կենսագրության բոլոր հանգամանքները: Արդյունքում ավանդական դասից տարբերվող ուսուցման այս ձևը դառնում է բովանդակալից, հետաքրքիր և տպավորիչ, որն

էլ իր հերթին նպաստում է աշակերտական նպատակի ձևավորմանը: Թանգարաններ այցելությունները կարևորվում են ոչ միայն արժեքների ցուցադրմամբ, այլև ցուցադրումից ստացվող զգայական տպավորությունների փոխանակումով: Թանգարանային ասպարեզում գիտությունն ու արվեստը մեկ նպատակ ունեն, այն է՝ օգնել մարդուն հասկանալու իրերի և երևույթների կապը, ուղղորդել նրան համակողմանի ճանաչողական գործունեության:

Կարևորելով սովորողների հետազոտական ինքնուրույն կարողությունների դրսևորումը՝ ուսուցիչը նախապես՝ մինչև այցելությունը, կարող է աշակերտներին հանձնարարել ինքնուրույնաբար ուսումնասիրել թեմային առնչվող գրականությունը (Ա. Բակունց «Խաչատուր Աբովյան» վեպ, Ե. Չարենց «Դեպի լյառն Մասիս» պոեմ, դասագիրք, Աշոտ Մելքոնյան «Արարատ. Հայոց անմահության խորհուրդը» գիրքը և ֆիլմը, համացանց և այլն):

Սովորողների ուսուցման պրոցեսում ուսուցիչը, որպես առաջնային նպատակ, պետք է կարևորի հետևյալ խնդիրները՝ Խ. Աբովյանի կյանքի, հայրենանվեր գործունեության մասին լայն ճանաչողությունը, ինչպես նաև նրա՝ իբրև ժամանակի առաջնակարգ մտածողի, ուսուցչի, հմուտ մանկավարժի, գրողի, «Պատմություն Տիգրանի» մանկավարժական աշխատության, «Նախաշավիղ կրթության» և «Խաղարկություն մանկաց» երկերի հեղինակի կերպարի արժևորումը:

Նախապատրաստական աշխատանքին կարող է հաջորդել ուսուցողական–ճանաչողական էքսկուրսիան դեպի գրողի ծննդավայր՝ Քանաքեռ: Ուսուցիչներս լավ գիտենք, որ Խ.Աբովյանը հանրագիտակ է բոլոր առումներով, և նրա կերպարի բացահայտումը կարևոր նախապայման է նրա անմահ ստեղծագործությունը ուսուցանելու համար: Ուստի Աբովյանի կյանքի գրական-լուսավորչական գործունեության հանգամանալից մեկնաբանության, և վերջինիս ծննդավայրն էլ իր բազմադարյան հարուստ անցյալով, վեհաշուք ու գեղատեսիլ բնապատկերներով, Սուրբ Հակոբ և Աստվածածին եկեղեցիների վսեմությամբ գրավում է աշակերտների ուշադրությունը՝ իմացական հմտությունները միահյուսելով զգացմունքային նուրբ և խորը ընկալումներին:Գրողի հայրենասիրական ոգին ծնունդ է առել հենց այն շռայլ սիրուց, որ սկզբնավորվում է հարազատ ծննդավայրից, ապա ամբողջանում առ Հայաստան: Այս սիրո ոգեղենացումը շնչավորվում է, երբ երեխաները մուտք են

գործում գրողի պապի՝ պ. Ապովի կողմից կառուցված տոհմական վայելուչ տունը, որտեղ ծնվել և իր մանկության ինը տարիներն է անցկացրել Խաչատուր Աբովյանը: Այդ տունը ճշգրտորեն ներկայացնում է նահապետական հայ ընտանիքը՝ իր կենցաղով, սովորություններով, կոլորիտով՝ ամբողջացնելով Աբովյանի նախնիների՝ որպես Արարատյան աշխարհի երևելիների կերպարային ընկալումը: Պետք է ենթադրել, որ տեսածի արդյունքում աշակերտների մեջ ձևավորվում է այն իմացական դաշտը, որն անչափ կարևոր է նյութի բազմակողմանի ընկալման և գիտելիքի ամրապնդման համար:

Ապա երեխաների նախնական տպավորությունները համալրվում են թանգարանի աշխատակցի մեկնաբանություններով, որոնք պատմական հարուստ վկայություններ են ինչպես ժամանակաշրջանի, այնպես էլ Քանաքեռ բնակավայրի, նրա անվան ծագման հետ կապված ավանդությունների մասին: Աշակերտներին խորապես հետաքրքրում են ինչպես հնագույն բնակավայրի անվան բացատրության հետ կապված հիշատակությունները, այնպես էլ Աբովյանի տված բացատրությունները, որոնք սովորողները հնարավորություն են ունենում լսելու տեղում (Նրանք իրենց տեսածն ու լսածը հակիրճ գրառումների տեսքով անցկացնում են գրականության տետրի մեջ): Հատուկ նշվում են գրողին բնութագրող, հատկանշական ու ոգեղեն մեջբերումները, որոնք ամպայման տպավորում են սովորողներին: Օրինակ՝ Խաչատուր Աբովյան եզակի անհատականության մասին Ավ. Իսահակյանը գրել է. «Նա՝ Աբովյանը, մեր նոր պատմության ամենամեծ նահատակն է՝ անթառամ լուսապսակով զարդարված: Նա մեր նոր առասպելն է, ազգային նոր միֆն է, մեր նոր Միհրն է նա՝ ազատագրված, շղթայազերծ»:

Թանգարանում անցկացված դասի շնորհիվ աշակերտները հնարավորություն կստանան հասկանալու 19–րդ դարում Անդրկովկասում, մասնավորապես Հայաստանում կատարվող բարդ, հակասական իրադարձությունները, հզոր ցարական Ռուսաստանի վարած քաղաքականությունը, ապա դրա հետևանքները, որոնք վճռորոշ դեր ունեցան ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ նրա նշանավոր զավակների, այդ թվում նաև՝ Աբովյանի կյանքում: Չէ՞ որ Աբովյանը այդ բարդ ու հակասական ժամանակաշրջանի հորձանուտում էր: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ գրականության ուսուցման բովանդակային կողմին առաջադրվող պահանջներից մեկը

միջառարկայական կապի ստեղծումն է, որը ուսումնական ընդհանուր նպատակի իրականացման նախապայմաններից մեկն է: Եվ թանգարանում եղած հարուստ ու բովանդակային պատմական իրադարձությունները ներկայացնող քարտեզները, գեղարվեստի գործերը՝ որպես ուսումնական նյութ, վերջնական նպատակին են հասցնում նյութի մատուցումը՝ ապահովելով պատմության և գրականության կապը, որն էլ նպաստում է նյութի լիակատար յուրացմանը:

Թանգարանում եղած Գ. Խանջյանի, Ա. Պարսամյանի, Է. Իսաբեկյանի «Ֆ. Պարրոտ», «Ֆ. Պարրոտը և Խաչատուր Աբովյանը Արարատի բարձունքում», «Ներսես Աշտարակեցի», Գ. Բաշինջաղյանի «Ապովենց տունը ձմեռը» կտավները անմոռաց տպավորություն են թողնում երեխաների վրա: Իսկ ականավոր նկարիչ Լյուդվիգ ֆոն Մայդելի ստեղծած դիմանկարը, որն Աբովյանի միակ դիմանկարն է, ինչպես նաև մեծն Շիլլերի, Ռուսոյի, Ֆ. Պարրոտի դիմանկարները անփոխարինելի միջոց են գրողի կենսագրության ուսուցման համար, որոնք ապահովում են աշակերտի անմիջական շփումը գեղարվեստին:

Իսկ երբ գրողի կենսագրության փաստերի ներկայացմանը զուգահեռ կարևորվում է նաև նրա բարոյակամային որակների ուսուցանումը, ստեղծվում է ապրումակցման միջավայր, երբ սովորողն զգում է գրողի ներաշխարհը, ապրումները և նրան հասկանալի են դառնում վերջինիս նպատակներն ու գաղափարները: Վերջապես աշակերտին է՛լ ավելի են հետաքրքրում Աբովյանի կյանքում կատարված եղելությունները, հատկապես այն աշակերտներին, որոնք դասաժամերին սովորաբար անուշադիր են կամ չեն ուզում մասնակցել դասերին: Մեր կարծիքով, Աբովյանի տուն–թանգարանում կազմակերպված դասի շնորհիվ կատարվում է թեմայի լիակատար մատուցում և յուրացում, քանի որ ուսուցման այն տեխնոլոգիաները, որոնց բնորոշ են պլանավորած արդյունքները, երբ ուսուցանողը պարտավոր է սովորողներին հասցնել ուսումնական նյութի բովանդակության պլանավորված ցուցանիշներ, ինչպիսիք են՝ գրողի ապրած ժամանակաշրջանը, պատմական կարևորագույն իրադարձությունները, գրողի կյանքի և գործունեության իրեղեն վկայություններ, ապա սովորողները ճանաչողական գործունեության արդյունքում ստանում են իրազեկական համակցված նյութ, որի շնորհիվ նախ

հասկանում են տարողունակ նյութը, ապա այդ պահին սովորածը հետո կարողանում են կիրառել որոշակի պայմաններում: Տվյալ դեպքում սովորողները այս ամենը կարող են կիրառել հաջորդ դասին՝ «Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ստեղծման հանգամանքները» թեմայի ուսուցման ժամանակ:

Աբովյանի կենսագրության ուսուցումը գրողի տուն-թանգարանում արժևորվում է նաև նրանով, որ դպրոցական շրջագայություններն ու էքսկուրսիաներն ունեն մեծ նշանակություն ինչպես ֆիզիկական, այնպես էլ մտավոր ու գեղագիտական դաստիարակության տեսակետից: Իր ժամանակին ինքը՝ մեծ լուսավորիչ Աբովյանն էլ մանկավարժության մեջ մեծ տեղ էր տալիս դպրոցական էքսկուրսիաներին՝ հիմնավորելով դրանց կրթիչ-դաստիարակիչ դերը: Ըստ Աբովյանի, արդյունավետ և խելացի ուսուցման նախապայմանն է «զննականությունը, պարզությունը և հիմնավորությունը դասավանդման ժամանակ... Անցումը հայտնիից դեպի անհայտը, պրակտիկայից թեորիային, շնչավոր աշխարհից դեպի վերացականը... անծանոթի համեմատությունը ծանոթի հետ, հասկանալ և հաճախակի կրկնել այն, ինչ մենք անցնում ենք... ուսումնական առարկաների համապատասխանությունը պատանեկության տարիքին և ըմբռնումներին...»:

Փորձս ցույց է տալիս, որ նույն կերպ տպավորիչ և ուսանելի են այցելությունները Հ. Թումանյանի, Ստ. Զորյանի, Ավ. Իսահակյանի, Հ. Շիրազի, Հ. Սահյանի.... թանգարաններ:

ԳԼՈՒԽ 2: ԳՐՈՂԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՈԹԱՏԵՏՐԸ՝ ՆԱՄԱԿԱՆԻՆ

Հետաքրքիր է նաև գրողի կենսագրությունն ուսումնասիրել նրա նամականու միջոցով: Որևէ գրողին լավ ճանաչելու համար շատ կարևոր է նրա նամակների ուսումնասիրությունը: Մեր շատ գրողներ իրենց հույզերն ու զգացմունքներն ավելի շատ և անթաքույց արտահայտել են հարազատներին, սիրելիներին կամ մտերիմներին գրված նամականիում: Այդպիսիններից է նաև Դանիել Վարուժանը:

Ըստ գրողի կենսագրության շրջանների՝ կարելի է կատարել խմբային աշխատանք՝ աշակերտներին հանձնարարելով ուսումնասիրել նրա նամակները: Ուսումնասիրությունից հետո, գրողի կենսագրական նյութի վերարտադրմանը զուգահեռ, ընթերցվում են հատվածներ նամակներից: Վերջում կատավում է ամփոփում՝ առաջարկելով բնութագրել գրողին որպես մարդու, քաղաքացու, արվեստագետի: Նամակներն ընթերցելով՝ ավելի է մեծանում համակրանքը գրողի նկատմամբ, ավելի դյուրին է դառնում նրա ստեղծագործություններին հաղորդակցվելն ու նրա գործերը մեկնաբանելը:

Վարուժանի նամակները շատ են. գրել է ընկերներին, ուսուցիչներին, հարազատներին: Լինելով բնավորությամբ պարզ ու շիտակ անձնավորություն՝ նա անկեղծորեն արտահայտում է իր մտքերը իր կյանքի դրվագների, ստեղծագործական հղացումների, ինքնահաստատվելու ճանապարհին ունեցած բազում դժվարությունների, հայ ժողովրդի ճակատագրի, անձնական ապրումների մասին: Դրանք այսօր թանկագին մասունքներ են, որոնք կարդալով՝ վերապրում ենք մեծ բանաստեղծի կյանքի և ստեղծագործական ուղու ուրախ և տխուր պահերը:

Նամակների ժամանակային հաջորդականությամբ սովորողները հետևում են Դանիելին. **մանկությունն** անցավ գյուղում, Բրգնիկն էր, որ կաթիլ առ կաթիլ ձևավորեց պատանու բնավորությունը և բանաստեղծական երևակայությունը:

«Անիկա թաղերուն ճիշտ մեջտեղը կբարձրանա գեղեցկորեն: Գյուղին պալատն է. իր գահին վրա գիրքը կիշխե, որուն մեջ սիրո օրենքը գրված է», - գրում է հետագայում Վարուժանն իր խոհերում:

Հետագայում Գենտ քաղաքից Վարուժանի գրած նամակի տողերը վկայում են, թե որքան է սիրել Վարուժանն իր **հայրենի գյուղը.** «Տարիներով կերազեմ վերապրել մանկական հասակիս սրտին մեջ՝ երկնահուպ ժայռի մը վրա՝ Ալիսի եզերքը վայրկյա՛ն մը, վայրկյա՛ն մը միայն և հետո թող անդունդը զիս կըլլ»՝:

Վարուժանը սիրում էր լսել պապի պատմությունները հայրենի բնության, **հեքիաթային քաջերի մասին**.«Կը լսեի ես զանոնք սևեռած խորն աչքերուն, և սիրտս իր խոսքը կ'ըմպեր, բոցն ինչպես ձեթը ճրագի»**:**

Վարուժանը գրում էր, որ՝ ինքը, «որպես գեղջուկ տղա, եղել է անհամարձակ, մելամաղձիկ»: Երևի դա այն պատճառով, որ մանկական տարիներին հայրը պանդխտության մեջ էր, և ինքը մեծանում էր անհայր: Նամակներով մենք տեսնում ենք հեղինակի **մորը, հորը, նրա մանկական ապրումներն ու մտավախությունները**: «Մայրս միջահասակ, շնորհալի և ժպտերես, ճերմակ մորթով, երկար մազերով մի կին էր»: Թագուհին իր մայրական գորովով փորձում էր մոռացնել տալ որդուն հայրական գգվանքի պակասը: Փոքրիկ Դանիելի համար աստիճանաբար հայրը դառնում էր հեռավոր, անհաս կարոտ: Այդ կարոտը նա առնում էր հորեղբորից, որին ուղղված նամակում հետագայում գրում է. «Մի՞թե կարելի է մանավանդ ինձի չհիշել Ձեզ՝ որուն շուքին տակ ժամանակ մը մանկությունս անցավ, որուն աչքերուն մեջ ժամանակ մը հայրս հաշտեցի»:

Դանիելը ուշ հաճախեց **դպրոց**՝ տասը տարեկան հասակում: «Գյուղին դպրոցը հազիվ սկսած եմ ժամգիրքը կարդալ սորվիլ՝ զիս տարած են Պոլիս,1896-ի կոտորածի օրերուն»:

Նրա հայրը գրագետ և կրթված մարդ է եղել, նույնիսկ թղթակցում էր Պոլսի մամուլին: Բայց երբ Դանիելը և նրա մայրը հասնում են Պոլիս, հայրը բանտում է լինում: Պոլսում Թագուհին ծանր հիվանդանում է: Բարեբախտաբար, շուտով

պարզվում է Գրիգորի անմեղությունը, և նա ազատվում է բանտից: Նույն տարին Դանիելը դառնում է Բերայի Սագըզ-աղաճի թաղի Մխիթարյան նախակրթարանի աշակերտ: Մի օր աշակերտները վարժարանի պատուհանից տեսնում են **հայերի ջարդերի պատկերներ** և սարսափում: «Այդ շրջանին կը հիշեմ ցույց տված ըլլալ մերթ տրտում և մերթ ջղագրգիռ խառնվածք մը»,- գրում է Վարուժանը:

Գատը գյուղի Մխիթարյան գիշերօթիկ վարժարանում նրա հայոց լեզվի **ուսուցիչ**ն էր Արիստակես Քասգանտիլյանը, որը կարևոր և վճռորոշ դեր է խաղացել Վարուժանի կյանքում: Նրան հղած նամակներից մեկում գրում է. «Ոչ մեկ հայերենի վարժապետ իմ վրա այնքան ազդած չէ, որքան Դուք: Մյուսներուն դասերը ինձի սովրեցուցին գիտնալ, Ձերիններն ՝ ստեղծել: Մյուսները ես միշտ պիտի հարգեմ, բայց զՁեզ պիտի սիրեմ»: Մինչև իր կյանքի վերջը միշտ նամակագրական կապի մեջ է եղել Քասգանտիլյանի հետ, իսկ 1913 թ. խնդրում է նրանից որևէ գործ «Նավասարդ» տարեգրքի առաջին համարում զետեղելու համար:

Այս վարժարանում էլ Վարուժանը կատարում է իր **գրական առաջին փորձերը**: «Առաջին երգերս սեր եղած են», - գրում է Վարուժանը: Վարժարանի տնօրեն Ա. Քասգանտիլյանը սրբագրում է բանաստեղծությունների առաջին տետրակը և ներկայացնում տպագրության: «Ծաղկեփունջ կամ Բրգնիքցիի մը նվագները» բանաստեղծությունների գրքույկն էր դա, որի մասին Վարուժանը գրում է. «Այս փնջիս ծաղիկներուն մեջ հոգիս ու սիրտս խառնած եմ, զի ծաղիկը շատ կը սիրեմ»: Ընդհանրապես, Վարուժանը շատ է կարևորել Քասգանտիլյանի կարծիքը, իսկ վերջինս էլ հատուկ ուշադրություն է դարձրել Վարուժանին: Ուսուցչին ուղղված նամակների մեծ մասն սկսվում է այսպես.«Գիտնալով,որ ինձի հանդեպ Դուք մասնավոր սեր մը ունիք,կը դիմեմ Ձեզի…»:

Հետո Ա.Քաստանգիլյանի միջնորդությամբ ընդունվում է Վենետիկի Մուրադ - Ռաֆայելյան վարժարանը: Ուսուցչի հանձնարարական-նամակում՝ ուղղված միաբանության հայրերին,գրված էր. «Նոր Մկրտիչ Պեշիկթաշլյան կը ղրկեմ, լավ նայեցեք»:

Վարժարանում նրա **ընկերները** հիմնականում Պոլսից և Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից եկած պատանիներ էին, որոնց հետ Վարուժանը սիրում էր ժամանակ անցկանցնել: Մի նամակում գրում է.«Կը

խոսեինք շատ մը նյութերու շուրջ, կարոտով կը հիշեինք մեր հայրենիքը: Երիտասարդական խանդավառությամբ և վառ գույներով կը պատկերացնեինք մեր անցյալի փառքերը և երազներով կը սպասեինք մեր հայրենիքի հրաշալի հարության…Մենք տեսած էինք 95-ի ջարդերը: Այդ արյունոտ օրերը մեր հիշողության մեջ դրոշմված էին, չէինք կրնալ մոռնալ»:

Ընդհանրապես, **Վենետիկը** բանաստեղծի ձևավորման գործում մեծ նշանակություն ունեցավ: Վարուժանն իր բանաստեղծական կյանքում կարևոր է համարում երեք կարևոր գործոն՝ Ղ.Ալիշանի շունչը, իտալական գրականությունն ու արվեստը, Վենետիկ քաղաքը: 1909 թ., երբ ավարտեց Գենտի համալսարանը և տուն էր վերադառնում, ճանապարհին Վենետիկում այցելում է **Ալիշանի** շիրիմին: Այդ մասին գրում է. «Կարդացած եմ Ալիշանը և տեսած եմ իր գերեզմանը: Ալիշանի շիրիմին վրա իբրև երախտագիտություն կը զետեղիմ պսակ մը՝ ջուրի և հողի ծաղիկներով հյուսված և լուսնի ու մատաղ քերթողին արտոսրներով օծվա»: 1906 թվականին լույս տեսավ Վարուժանի առաջին ժողովածուն «Սարսուռներ» վերնագրով: Այս շարքի բանաստեղծություններում ավելի շատ համամարդկային ապրումներ են:

Շատերն ասում էին, որ Վարուժանի վրա մեծ է **Պ.Դուրյան**ի ազդեցությունը: Այդ մասին Ռ.Պազարճյանին գրած մի նամակում Վարուժանը ասում է. «Դուրյանի տխրության շարժառիթը նույն իր անձն է, իմինս՝ ուրիշներինը, Դուրյան կ'ողբա իր չկրնալ ժպտելեն, ես կ'ողբամ գութես և բարկութենես»: Երիտասարդ բանաստեղծը դրսևորում էր սեր խեղճերի, աղքատների, տնանկների, թշվառների, տառապյալների ու պանդուխտների հանդեպ: Իսկ պանդխտության դառնությունը ինքը դեռ փոքրուց էր զգացել. «Արձակուրդներս ընդհանրապես անցած են հորս քով, Խավյար խանը, **հայ պանդուխտներ**ուն հառաչանքներու ու վերքերու տրոփյունին ունկնդիր»: Պանդուխտների վիճակի մասին Վարուժանը շատ է խորհել. պանդուխտի կարոտի մեջ նա մաս էր գտնում իր կարոտից: Գրքի էջերում տեղ գտած «Հիվանդ է», «Ձյունե դագաղը», «Հավերժության սեմին», «Հայր,օրհնե», «Վշտին» և այլ բանստեղծություններ հաստատում են, որ Վարուժանը ստեղծում է համամարդկային ապրումներ:

1905 թվականին Վարուժանը մեկնեց Բելգիայի Գենտ քաղաքը՝ սովորելու տեղի **համալսարան**ում: «Համալսարան կը հաճախեմ.գրական և իմաստասիրական ճյուղերուն. հավանական է մնամ երեք տարի»: Վարուժանի

նամակում կարդում ենք.«Գիրքը, գրասեղանիս վրա կը հսկե ապագային պատրվակով, գիս կը շղթայե աթոռին, գարունը պատուհանես կը շնչեմ… Ի՞նչ փույթ թե ըղեղը թուղթերու մեջ կը քամվի, և սիրտը գրիչն իվար կ'արունի, փոշոտ հատորներուն մեջ ինչ փույթ…»:

Սովորողները գնահատում են իրենց **ընկերությունը**՝ Վարուժանի՝ ընկերներին ուղղված նամակներով՝ «Իմ սիրելի Պիեր,քեզ ուշ-ուշ եմ գրում, գիտեմ, բայց ճանաչում եմ քո սրտի բարությունը. դու ինձ հեշտությամբ ես ներում. դա բարեկամների պարտքն է …Քեզ ճանաչել եմ որպես իմ և Հայաստանի լավագույն բարեկամներից մեկի»:

Սովորողները սովորում են գիտակցել՝ բարեգործությունն ու օժանդակությունն էլ **պատասխանատվության** են տանում: Գենտում սովորելու տարիներին Վարուժանը կրում է ծանր ապրումներ նյութական և բարոյական առումով: Մուրադ-Ռաֆայելյան վարժարանից ուղարկվող թոշակի պատճառով խիստ վեճեր է ունեցել Ս.Ղազարի վանահայրերի հետ և շատ վրդովված էր նրանց գծուծության պատճառով: Վարուժանի կարծիքով՝ «Քահանաներուն խոսքը քաղցր է իրենց աղոթքին պես, բայց իրենց սիրտը սև է իրենց գդակին պես»:Նա ամեն ամիս Միաբանության տեսուչ հայր Ստեփան Սարյանին նամակով ուղարկում էր տվյալ ամսվա կատարած ծախսերի հաշիվը ամենայն մանրամասնությամբ: Սարյանին ուղղված նամակում ասում է. «Փոխարե՞նը: Ամեն ջանք կ'ընեմ ըլլալ պարծանք դաստիարակներուս, և օգտակար ազգին. Ահա պարտքս»:

Ընկերոջը գրում է.«Հորմես նամակ կ'առնեմ,կը վախեմ, որ Պոլիսը դարձյալ արյան քաոս պիտի դառնա. Ձայս առաջադեմ երիտասարդության հետ շփումը ենթադրելու բավական փաստ ունիմ մտքիս մեջ»: Շփումը բելգիական առաջադեմ երիտասարդության հետ Վարուժանին ավելի ու ավելի էր մղում դեպի **ազգային տառապանքի ու պայքարի երգը**: «Հայությունը կուլար ու կը մռնչեր մեջս»,- գրում Վարուժանը: Բանաստեղծի հոգեկան մեծ տառապանքի մեջ գերիշխողը հույսի, պայքարի, գոյատևելու, հավատի մոտիվն էր. «Հայը պիտի ապրի հակառակ իր դահիճներուն և հակառակ իր առյուծի աչքին տակ բուսած կորեկին:Հայը պիտի ապրի ժողովուրդներու սիրազոդ շղթային մեկ օղակը ըլլալու համար:Այս է մեր բոլորիս հույսը»:

Հետաքրքիր է Վարուժանի մոտեցումը **գրական ուղղություններին**: Ո՞ր ուղղությանն է հետևել Վարուժանը, ո՞րն է նրա ստեղծագործական մեթոդը: Քննադատությունը Վարուժանին անվանել է և՛ ռեալիստ, և՛ սիմվոլիստ և՛ ռոմանտիկ: Իսկ Վարուժանի կարծիքով՝ «Անտրամաբանական գտած եմ գրական դպրոցներու բաժանումը. Ըստ իս գեղեցիկը դպրոց չունի»:

1908թ. կազմում է հայրենասիրական բանաստեղծությունների ժողովածու, բայց չի կարողանում հովանավոր գտնել գիրքը հրատարակելու համար: Վարուժանը հիասթափված գրում է. «Հիմա կը հասկնամ, թե որքան անիծված են գրագետները. Մոր մը աղեգալար երկունքովը կը ծնանին իրենց երկը, իրենց զավակը և տունը զգեստ չունին, որ զայն պճնեն, արևի լույսին, դեպի դաշտերն հանեն այդ դաշտերու որդին»: Իր գրական բոլոր մտահղացումներն ու ծրագրերը Վարուժանը այսպիսի նամակներով կիսել է Արշակ Չոպանյանի հետ: Իսկ «Ջարդ»-ի մասին գրում է. «Ընդունեցե՛ք. Արցուքիս, ցասումիս և հեգնությանս մեկ խմորումն է»: Նա համոզված ասում է.«Հայը պիտի ապրի հակառակ իր դահիճներուն..ժանիքի դեմ ժանիք, թաթի դեմ թաթ վրիժառու»:

1911 թ. աշնանը Վարուժանը տեղափոխվում է Թոքատ և **աշխատանք**ի անցնում Ազգային ճեմարանում որպես ավագ ուսուցիչ: Գավառում անցկացրած երեք տարիների մասին Վարուժանը գրում է. «Գավառին երեք տարվա կյանքս ջղայնացնող պայաքարում մը եղավ ընդդեմ նախապաշարումներու, ժողովրդական տգիտության և կուսակցական խոլություններու»: Նա ասում էր, որ ժողովուրդը ծարավ է, և «լույսի կուժը պետք է մոտեցնել իր շրթունքներին»: Վարուժանի շնորհիվ Թոքատի հասարակական կյանքում աշխուժություն մտավ: Իր ընկեր Թեոդիկին ուղղված նամակում գրում է. «Ավելի ժողովուրդին հետ կը կենակցիմ, քան թե Մուսային և ավելի հռետորություն կ'ընեմ, քան թե տաղերգություն»:

Բանաստեղծը հավատում է **հայի կենսունակությանը, նրա ապագային**: «Հայը մի մարտիրոս է, մի վկա: Ժանտ ձեռքերը ջախջախեցին իր գանգը, բայց նա կրցավ ստեղծագործել: Կոտրեցին իր բազուկները, բայց նա ակռաներով բացեց իր սրտին ակոսները, նիզակներու և յաթաղանի հարվածներով պատռեցին իր կուրծքը և ծակծկեցին ամբողջ իրանը և սակայն չի կրցին մեռցունել զինքը, որովհոտև սիրտը կը բաբախեր տակավին այնքան ուժգին, որքան մի առույգ երիտասարդի սիրտը»: Երեք տարիների գավառական կյանքը

Վարուժանին նաև կյանքի ընկեր: Այդ մասին ընկերոջը՝ Նշան Տեր-Ստեփանյանին, նամակով գրում է. «Ամուսնությունս եղավ հանկարծակի, սիրային ողբերգություն մը վերջ , որ գրեթե տարի մը տևեց: Կատարյալ վեպ մըն է, զոր ապրեցա Սվազի մեջ, անցնելով ես և նե, խիստ վտանգալից, դրամատիկ»:

Դեռահաս սովորողներին անչափ գրավում է նամակների միջոցով նկարագրված **գեղեցիկ սիրո պատմությունը**. Վարուժանի աշակերտուհիներից մեկը՝ մեծահարուստ ընտանիքի զավակ Արաքսի Թաշճյանը, որն ինքն էլ գրական փորձեր էր անում և հիացած էր Վարուժանի տաղանդով,խնդրում է ծնողներին, որ իրեն ուղարկեն Վարուժանի մոտ՝ մասնավոր պարապմունքների: Եվ դասերի ընթացքում նրանց միջև ծնվում է փոխադարձ սեր: Արաքսիի ծնողները, սակայն, արդեն մի հարուստ պարոնի տվել էին իրենց համաձայնությունը աղջկան ամուսնացնելու: Արաքսիի հայրը իմանում է աղջկա և Վարուժանի սիրո մասին և աղջկան արգելում է տնից դուս գալ: Վարուժանը հոգեկան ծանր պահեր է ապրում: Մի պահ հոր ազդեցության տակ Արաքսին նամակ է գրում Վարուժանին և հորդորում հրաժարվել իրենից: Սակայն Վարուժանը ետ չի կանգնում՝ հասկանալով, որ Արաքսիին պարտադրել են: Արաքսին զղջում է և հաջորդ նամակն է գրում Վարուժանին. «Դու գիտցիր, որ քեզ մոռանալ անկարելի է, մահս նույնիսկ քեզ համար աչքս առած կը պտըտիմ խևի պես, միշտ նայելով նկարիդ վրա, հազիվ կրնամ զսպել արցունքս և մերթ ընդ մերթ ալ արցունքներովս և համբույրներովս կը ողողեմ զայն»: Գրում է նաև, որ պատրաստ է պայքարելու իր սիրո համար: Վարուժանն այդ նամակից թևեր է առնում և ուղարկում պատասխան նամակը. ««Իմ հզոր և քաղցր Արաքսի, ես համոզվեցա, որ դուն չես փոխված և այդպես հեղհեղուկ մտքի տեր մեկը չես: Այս քանի մը օրը դժոխային տառապանքներ կրած եմ: Նամակդ եկավ վերջ դնելու այն վերքերին, որ սրտիս մեջ կը լայննար»: Նրանք խորհում են և որոշում են փախչել, սակայն Արաքսիի ծնողները, տեղեկանալով այդ մասին, տալիս են իրենց համաձայնությունը: Հաղթում է մաքուր և ազնիվ զգացմունքը, և Վարուժանն ու Արաքսին ամուսնանում են: Վարուժանը երջանիկ էր **ընտանիքում**: Ծնվեցին Վերոնիկ-Վարուժնակ աղջիկը և Արմեն տղան: Նամակով Պիեռ Մաեսի հետ կիսում է իր երջանկությունը. «Սիրելի՛ Պիեռ,արդեն երկու տարի է, ինչ ամուսնացել եմ: Կինս կոչվում է Արաքսյա, մի գեղանի խարտիշուհի, որին սիրում եմ ռոմանտիկ սիրով: Ավելին, ես ունեմ մեկ

տարեկան մի աղջնակ: Նա արդեն գիտե «պապա» ասել, և այդ բառն ինձ լցնում է անհատնում հրճվանքով: Ես նրան ձոնել եմ մի բանաստեղծություն «Վարուժնակիս» վերնագրով. դա անունն է այդ փոքրիկ հրեշտակին, որին խանդաղատում եմ ամբողջ սրտով»:

Ընտանիքից դուրս նա ուներ երկրորդ ընտանիքը՝ դպրոցը, իր սիրելի աշակերտները: 1912թ. Վարուժանը ընտանիքով տեղափոխվում է Պոլիս: Մոտ երեք տարի ապրեց Վարուժանը Պոլսում, սակայն դարձավ պոլսահայ գրական և հասարակական կյանքի ճանաչված դեմքերից մեկը:

Վարուժանի վերաբերմունքը մայրենիին.Վարուժանն առաջին հերթին կարևորում էր մայրենի լեզվով ազգային կրթությունը: Նա ասում էր. «Զանազան սպառնալիքներու տակ ինկած ազգ մըն ենք, որ պետք ունինք մեր բոլոր տոհմային հատկությունները կեդրոնացնելու և զարգացնելու»: Իր հասցեին հնչած **հերյուրանքների դեմ** նա մի բաց նամակ է գրում. «Ինչու՞ ցավիմ անոնց վրա, որոնք քերթողի մը հոգին ըմբռնելու կարողություն իսկ չունին: Մենք կ'երգենք կյանքի բոլոր երևույթները. Այսօր կը ծիծաղինք, վաղը կուլանք, այսօր քահանա ենք, վաղը՝ քուրմ, օր մը թափառական, օր մը արքա, օր մը սիրահար, օր մը ատեցող, բայց իսկապես ո՞չ մեկն ենք,մենք մենք ենք: Աստված մեր սիրտը հայելի մը դրած է՝ որ հավատարմորեն կը ցոլացնե ամեն ինչ՝առանց ամեն ինչ ըլլալու: Այդ իսկ պատճառով է, որ երբ քերթողը ծնանի , իր հետ կը ծնանի նաև աշխարհը իր գաղտնիքներով: Ծուները կը հաչին, բայց քարավանը կ'անցնի»: Եվ, իրոք, նրա քարավանը անխոտոր շարունակում էր իր ճանապարհը՝ հաղթահարելով բոլոր խոչընդոտները:

1913թ. **շրջանավարտներին վկայականներ հանձնելու** հանդիսավոր արարողության ժամանակ Վարուժանը հանդես է եկել **ճառով**՝ «Հուսկ բանք»: «Հաջողությունը դուք անձամբ այսուհետ պիտի գտնեք: Մենք անոր ճամփան սորվեցուցինք: Ձեզի տվինք երեք ոսկեղեն բանալիներ հաջողության երեք դռներ բանալու համար: Առաջինը Երազի և Սրբության դուռն է՝ ուրկե կը մտնեք ընտանեկան օջախը:Երկրորդ դուռը Կյանքն է,ուր մարդիկ օրն ի բուն կը գոտեմարտին հացին համար հավիտենական կռիվ կը մղեն: Երրորդ դուռը հայրենիքի արյունլվա ու լալաճռինչ դուռն է, հայրենի երկիրը՝ փշաստան և բուրաստան»:

Վարուժանն ինքը կաթոլիկ էր, բայց նրա համար **դավանանք**ը երկրորդական նշանակություն ուներ, կարևորը ազգային կրթության գործն էր: Նա շատ սուր խոսքեր է գրել վանքի և վանահայրերի մասին: Նրան հարցրել են. «Ուրեմն եկեղեցին վերացնե՞նք»: Նա պատասխանել է. «Չէ, հայ եկեղեցին պահպանելու ենք, որովհետև ան արժեք ունի իբրև հանավանդ հաստատություն»:

1913 թ. **հայոց գրեր**ի գյուտի 1500-ամյակին նվիրված հանդիսություններին բազմաթիվ կրակոտ ելույթներ է ունենում: «Ո՞վ պիտի կրնա գրել այդ տառերուն պատմությունը, անոնք հրաշեկ գամերու նման Ցեղին գոյությունը հաստատեցին մագաղաթներու հավերժական հաստատության վրա»,- ասում է Վարուժանը:

«Հեթանոսական շարժում». «Հեթանոս երգեր» ժողովածու, «Նավասարդ» տարեգիրք, որը նա հրատարակեց իր ընկեր բանաստեղծ և խմբագիր Հակո Սիրունու հետ: Դեռևս 1908թ. Վարուժանը գրում է. «Հեթանոս կյանքը օրեօր զիս կը գրավե. եթե այսօր կարելի ըլլար, կրոնքս կը փոխեի և սիրով կ'ընդգրկեի բանաստեղծական հեթանոսությունը»:

1913-1915 թվականներին գրվեց «Հացին երգը»: Մի նամակում նա գրում է. «Այժմ կգրեմ «Հացին երգը», որ հուսամ տարիե մը լույս կտեսնե. այդ հատորին մեջ երգված պիտի ըլլան հայրենի հողը, մշակներու աշխատությունը և գյուղական կյանքի խաղաղ մեծությունները: Հաճելի է ինձի միշտ լարերս փոխել և վերանորոգվիլ արվեստիս մեջ, և եթե մուսաները չլքեն զիս, դեռ պիտի կրնամ շվարեցնել»: 1915թ ապրիլի 24-ից ձերբակալում են նաև Վարուժանին: Մի քանի օր առաջ Վարուժանի ընկերները առաջարկում են հեռանալ Պոլսից: Բայց նա հրաժարվում է՝ ասելով, որ չի կարող թողնել ո՛չ հայրենիքը, ո՛չ ընտանիքը: Այդ օրերին Վարուժանը պատվիրել է կնոջը, որ ծնվելիք զավակի անունը Վարուժան դնի, ապա ընկերներին ասել է. **«Պիտի մեռնիմ Հայաստանի պատկերը բիբերուս մեջ»**: Ճանապարհին՝ Թունեյի ձորում, քրդերը հարձակվում են նրանց կառքի վրա, բոլորին կապում ծառերից և գազանաբար սպանում: Դա 1915թվականի օգոստոսի 26-ն էր:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ուսուցման մեթոդների արդյունավետության հիմքը սովորողին ուսումնական գործունեությանը ակտիվ ներգրավելն է, երբ վերջինս հնարավորություն է ստանում իր տեսակետը արտահայտելու և պաշտպանելու, բանավիճելու կամ համալրելու նոր դատողություններով: Այսօր տեղեկույթի ընկալումը ակտիվ գործընթաց է, և երբ այն համակցում է արտաքին միջավայրից ստացվող հուզական տպավորություններ ու պատկերային ընկալումներ, սովորողը առավել ակտիվ հետաքրքրություն է ցուցաբերում՝ անձնապես մասնակցելու և լրացնելու ունեցած գիտելիքները խմբային գործունեության շնորհիվ:

«Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների ուսուցման և ուսումնառության մեջ հատկապես կարևորվում է նաև հայ հեղինակների կյանքի, կենսագրության, տվյալ գրողի բերած նորության, հայ գրականության զարգացման վրա ունեցած ազդեցության, գրական սեռերի, ժանրերի, ժամանակաշրջանի հետ անմիջական կապի մասին պատկերացման ձևավորմանը: Մանկավաական փորձն ու արդի միտումները փաստում են գրողի կենսագրության ճիշտ մատուցման կարևորությունը՝ գրողին արժևորելու գործում: Նրա կենսագրությունն ուսումնասիրելուց հետո գրական երկի ուսումնասիրությունը ավելի հեշտ և հասականալի է դառնում, նպաստում է սովորողի վերլուծական և քննական կարողությունների, ինչպես նաև գրական ճաշակի ձևավորմանը, ազգային

ինքնության ճանաչմանը և արժևորմանը: Հեղինակների կենսագրության, տվյալ գրողի բերած նորության, հայ գրականության զարգացման վրա ունեցած ազդեցության, գրական սեռերի, ժանրերի, ժամանակաշրջանի հետ անմիջական կապի մասին պատկերացման ձևավորումը գրականությունն ու հայոց մեծերին ավելի հարազատ, մարմնական է դարձնում, և սովորողների համար անտեսանելի են թվում ապրած ժամանակաշրջանների միջակայքը:

Հետազոտական աշխատանքով ներկայացրինք այդպիսի մեթոդներից միայն երկուսը՝ ուսումնաճանաչողական էքսկուրսիան և նամականին: Համոզված ենք, որ դրանց կիրառումը անպայման կօգնի գրականության ուսուցիչներին ապահովելու սովորողների համար նախատեսված չափորոշչային վերջնարդյունքները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սիմոնյան Ռ., Ակնարկներ հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմության: Եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 2003թ., էջ 200, 29:

2. Մինասյան Բ. Մանկավարժության հիմունքներ, Թավրիզ, 1931թ., էջ 24, 27 էջ: Աբովյան Խ. Ա., Վերք Հայաստանի. Ողբ հայրենասերի, ՀՊՀ, Երևան, 1959, 222 էջ:

3.Դանիել Վարուժան հատոր 3, նամակներ

4.Վազգեն Գաբրիելյան «Դանիել Վարուժան»

5. Հայոց լեզու և գրականություն, թիվ 5-6 (61), Կրթության ազգային ինստիտուտ, 2009, էջ 39-44 (Դ. Գասպարյան), 50-52 (Ն. Տողանյան)

http://shsu.am/media/journal/2013n2b